ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

02 հոկտեմբերի 2023թ.N Ե-6146

«ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի Ա. Սարգսյան

Աբովյանի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 19.09.2023 թվականին կնքվել է «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/35-1» ծածկագրով ապրանքի մատուցման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝
Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով՝ տեխնիկական բնութագիր – գնման ժամանակացույցի պահանջներին համապատասխան ապրանք (թուղթ A4 ձևաչափի), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:
«Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ստացվել է պատճառաբանված գրություն, այն է Աբովյանի համայքնապետարանի և «Սոֆթ Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/35-1» ծածկագրով պայմանագիրը ընկերությունը կատարել չի կարող, քանի որ «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/35» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Սոֆթ Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից թյուրիմացաբար ընդհանուր արժեքի փոխարեն համակարգում մուտքագրվել է միավորի արժեք, ինչի հետևանքով էլ ընկերությունը հրաժարվում է կնքված պայմանագրի կատարումից:
Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթներով՝ Աբովյանի համայքնապետարանի և «Սոֆթ Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/35-1» ծածկագրով Պայմանագիրը ամբողջությամբ միակողմանի լուծվում է Գնորդի կողմից:
Ընկերության կողմից ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 3.2 և հավելված 4.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից

համապատասխանաբար 242550 ՀՀ դրամ և 161700 ՀՀ դրամ Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընդունել ի գիտություն.

Եթե «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին և եթե մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվում է լիազորված մարմին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

Կապ. Զարգացման ծրագրերի և գնումների բաժնի պետ
Ա. Ծապուրյան
+37460536402